Ընտանեկան բռնության հիմնախնդիրը Հայաստանում՝ COVID-19 համավարակի լույսի ներքո

Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի հանդիպում

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ս.թ. ապրիլի 4-ին կայացավ Ազգային ժողով-ՔՀԿ համագործակցության հարթակի առաջին առցանց հանդիպումը՝ «Ընտանեկան բռնության հիմնախնդիրը Հայաստանում՝ COVID-19 համավարակի լույսի ներքո» խորագրով:

Հանդիպմանը քննարկվեցին ընտանեկան բռնության հիմնահարցերը Հայաստանում, ներկայացվեցին առաջարկություններ՝ ուղղված COVID-19-ով պայմանավորված մեկուսացման պայմաններում ընտանեկան բռնության դեպքերի արագ արձագանքմանը և արդյունավետ կանխարգելման գործուն մեխանիզմների ներդրմանը:

Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, ՀՀ մարդու իրավուքների պաշտպանի գրասենյակի պատասխանատուներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, փորձագետներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հանդիպումն իրականացվել է «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակում[1]:

[1] «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի կողմից՝ ՀՀ Ազգային ժողովի, ՕքսԵՋԵՆ հիմնադրամի, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Ժողովրդավարության Վեսթմինսթր հիմնադրամի հետ համագործակցությամբ: Ծրագիրն իրականացվում է Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» և Շվեդիայի կառավարության օժանդակությամբ:

Հանդիպման ընթացքում ներկայացվել են համավարակի ժամանակահատվածում ընտանեկան բռնության վերաբերյալ վիճակագրական տվյալներ և դեպքերի արձագանքմանն ուղղված քայլեր, մատնանշվել և քննարկվել են ընտանեկան բռնության հետ կապված մի շարք նոր և մինչ այդ առկա խնդիրներ, հնչեցվել այդ խնդիրների լուծման առաջարկություններ:

I. Վիճակագրական տվյալներ և դեպքերի արձագանքմանն ուղղված քայլեր.

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն արձանագրել է ընտանեկան բռնությանը վերաբերող ահազանգերի 28-29% աճ:
- Ըստ Կանանց աջակցման կենտրոնի արձանագրած տվյալների, նախորդ տարվա համեմատ՝ մարտ-ապրիլ ամիսներին գրանցվել է ընտանեկան բռնության դեպքերի մինչև 50% աճ:
- ՀՀ ոստիկանության տվյալներով մարտի 16-ից սկսած եղել է 180 ահազանգ, որոնք վերաբերել են ընտանեկան բռնությանը, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդ թիվը 170 է եղել:
- Վիճակագրական տվյալները փաստում են, որ ընտանեկան բռնության հարցերով աջակցություն ստանալու նպատակով տուժածները գերադասում են դիմել հասարակական կազմակերպություններին, քան իրավապահ մարմիններին: ՄԻՊ-ի դիտարկմամբ՝ լինում են դեպքեր, երբ խորհրդատվություն ստանալուց հետո տուժողները չեն ցանկացել, որ ահազանգին ընթացք տրվի ոստիկանությունում:
- Դեպքերի համակարգման և ճիշտ արձագանքման նպատակով Մարդու իրավունքի պաշտպանի գրասենյակում ստեղծվել է հատուկ աշխատանքային խումբ, որը մասնագիտացած է ընտանիքում բռնության հարցերով և իրականացնելու է ինչպես գրավոր ու բանավոր բողոքների քննարկում, այնպես էլ ընդհանուր մշտադիտարկում (հրապարակումներ, պետական մարմինների աշխատանք և այլն):
- Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Պարետին և Ոստիկանության պետին հատուկ առաջարկներով.

  - Արտակարգ դրության պայմաններում բռնության ենթարկված անձի համար պետք է հասանելի լինեն իրավունքների պաշտպանության անհրաժեշտ հնարավորություններն ու աջակցության բոլոր ծառայությունները (առողջապահական, սոցիալական, հոգեբանական և այլն):

  - Բոլոր հերթապահ ոստիկանները պետք է հատուկ հրահանգավորումներ ստանան ընտանեկան բռնությունից տուժած անձանց աջակցություն ցուցաբերելու և նրանց ուղղորդելու մեխանիզմների վերաբերյալ:

II. Քննարկված խնդիրներ.

- Արտակարգ իրավիճակում սրացել են ընտանեկան բռնության արագ և մասնագիտական արձագանքման հետ կապված մինչ այդ առկա խնդիրները: Դրանց թվում են ուղղորդման մեխանիզմների անկատարությունը, դեպքերի կենտրոնացված հաշվառման բացակայությունը և օրենսդրական բացերը, որոնք հնարավորություն չեն տալիս ապահովել բռնության ենթարկված անձանց արդյունավետ պաշտպանություն, լիարժեք բացահայտում և հետագա հնարավոր դեպքերի կանխարգելում:
- Ոստիկանության և քննչական մարմինները զգայուն չեն ընտանեկան բռնության հարցերում և չեն կարողանում արդյունավետ արձագանքել խնդրին, ինչը վկայում է այն մասին, որ մինչ այդ տարբեր ծրագրերով անցկացված ընտանեկան բռնության հարցերով մասնագիտացումը չի կարելի բավարար համարել:
- Իրավիճակը հատկապես մտահոգիչ է մարզերում. դիտարկումները բացահայտում են, որ իրավապահ մարմինները լուրջ թերացումներ ունեն ընտանեկան բռնության դեպքերի հետ կապված կանխարգելիչ աշխատանք կատարելու և տուժողներին ճիշտ ուղղորդելու հարցում:
- Արտակարգ դրության օրերին ապաստարան տրամադրող ՀԿ-ների մի մասը ժամանակավորապես չեն աշխատում, և դա խնդրահարույց իրավիճակ է ստեղծում շահառուների համար:
- Խնդիրներ կան ընտանեկան բռնությունից տուժածներին աջակցություն ցուցաբերելու մասին լայն և հասանելի կերպով իրազեկելու հարցում:
- Այսօր գործող տարբեր թեժ գծերի պարագայում ընտանեկան բռնության ենթարկված անձինք չեն կարողանում կողմնորոշվել թեժ գծերից որ մեկին դիմել իրենց խնդրով:
- Մարզերում սոցիալական ծառայությունների լիարժեք գործունեության խնդիր կա, մինչդեռ դրանք շատ կարևոր օղակ են բռնության դեպքերի հայտնաբերման և կանխարգելման համար:

III. Խնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ.

- Նախաձեռնել ևս մեկ քննարկում Ընտանեկան բռնության թեմայով, առավել ընդլայնված կազմով՝ ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և ՀՀ ոստիկանությանը;
- Ստեղծել ընտանեկան բռնությունից տուժածների համար արդյունավետ ուղղորդման մեխանիզմ;

- Ստեղծել մեկ՝ կենտրոնացված ազգային թեժ գիծ, ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցելու նպատակով, ապահովել այն համապատասխան ուսուցում անցած կադրերով և տեխնիկական հնարավորություններով;
- Բարձրացել հանրության իրազեկվածությունը բռնության ենթարկված անձանց աջակցության վերաբերյալ՝ գործող թեժ գծերի (գերադասելի է մեկ կենտրոնացված թեժ գծի) մասին սոցիալական գովազդային հոլովակները հեռուստատեսությամբ պարբերաբար ցուցադրելու միջոցով;
- Օգտագործել այլ հնարավոր եղանակները՝ բռնության ենթարկված անձանց աջակցելու մասին հանրության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով, այդ թվում հանրային վայրերում անհրաժեշտ տեղեկատվությունը տեղադրելու միջոցով;
- Իրականացնել ինտենսիվ և շարունակական մասնագիտացման ծրագրեր ոստիկանության հնարավորինս մեծ թվով ծառայողների համար՝ բռնության դեպքերին արագ ու պրոֆեսիոնալ արձագանքելու հարցում թերությունները վերացնելու նպատակով;
- Ամրապնդել և ընդլայնել հասարակական կազմակերպությունների և ընտանեկան բռնության հարցերով զբաղվող պետական կառույցների միջև համագործակցությունը՝ տեղեկատվության և փորձի փոխանակման, ինչպես նաև ընտանեկան բռնությունից տուժածներին առավել համակարգված և թիրախային աջակցություն ցուցաբերելու նպատակով;
- Դիտարկել արտակարգ իրավիճակի պայմաններում ընտանեկան բռնության դեպքերի նախաքննության գործողությունները հեռավար իրականացնելու հնարավորությունը (առաջարկը ներկայացվել է պատասխանատու կառույցներին, սակայն մերժում է ստացվել);
- Ներկայացնել Ազգային ժողով ընտանեկան բռնության վերաբերյալ ՀԿ-ների կողմից մշակված օրենսդրական առաջարկությունների փաթեթը;
- Քննարկել ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովում ընտանեկան բռնության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից պատրաստված օրենսդրական բարեփոխումների փաթեթը, ինչից հետո նախաձեռնել հեռավար քննարկում՝ ընդլայնված ֆորմատով;
- Հրավիրել, անհրաժեշտության դեպքում, խորհրդարանական լսումներ ընտանեկան բռնության վերաբերյալ օրենսդրական բարեփոխումների թեմայով;
- Կազմակերպել հնարավորինս արագ ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացած հաշվառումը, ինչը նախատեսված է ՀՀ կառավարության 10 հոկտեմբերի 2019, թիվ 1381 – Ն որոշմամբ[2]:

2Հանդիպման ավարտից հետո այս առաջարկի մասով պարզվել է, որ համակարգը գործարկելու համար անհրաժեշտություն է ծագել օրենսդրական փոփոխություն կատարելու, և համապատասխան նախագիծն այս պահին մշակվում է Կառավարության կողմից: